յաստանում եւ թէ՛ Տաճկահայաստանում յաղթանակում էին նրանք, որոնք պարզել էին ազատութեան, եղբայրութեան, հաւասարութեան եւ առհասարակ գիտութեան ու նոր գաղափարների փայլուն դրօշակը:

Տաճկահայաստանում արեւմտեան գաղափարների ուժեղ դրօշակակիրներն էին՝ Գրիգոր Օտեան, Ռուսինեան, Ստեփան Ոսկան, ապա Մամուրեանը, Ծերենցը եւ ուրիշները:

Ինչպէս Ռուսահայաստանում մեր ազատամիտ-լիբերալ հրապարակախօսներին զօրավիգ էին հանդիսանում առաջադէմ բանաստեղծներն ու վիպասանները՝ Սմբատ Շահազիզ, Բաֆֆի, Գամառ-Քաթիպա, Ղազարոս Աղայեան եւ ուրիշներ 60-ական եւ 70-ական թուականներին, այնպէս էլ տաճկահայ կեանքում առաջադիմական դեր են կատարել Խրիմեան Հայրիկ, Սրուանձտեան, Պէշիկթաշլեան, Թէրզեան, Խորէն Նարպէյ եւ ուրիշները՝ գրական-թատերական եւ հասարակական շարժման ասպարէզներում:

Մենք դիտմամբ այստեղ չենք յիշատակում այն գործիչներին, որոնք Ռուսահայաստանում եւ Տաճկահայաստանում պարզել էին պահպանողականութեան դրօշակը եւ ուժգին պայքար էին մղում վերեւ յիշած խիզախ ազատամիտների դէմ: Չենք յիշատակում ո՛չ թէ նրա համար, որ նրանք բարերախտաբար պարտուել են այդ պայքարի մէջ եւ ոչ էլ նրա համար, որ ուրանում ենք նրանց պատմական դերը: Բնա՛ւ ոչ: Չենք յիշում նրա համար, որովհետեւ այստեղ հայ գրականութեան պատմութեան տեսութեամբ չենք զբաղւում եւ մէկ էլ այն պատճառով, որ մեզ հետաքրքրող վաղամեռիկ բանաստեղծ Դուրեանն ազատամիտների բանակի մարդ էր:

Նա ծնուեց այնպիսի ժամանակ, երբ հայ ժողովուրդը վերածնւում էր քաղաքականապէս եւ կուլտուրապէս թէ՛ Ռուսաստանում եւ թէ՛ Տաճկաստանում, երբ տակաւին հայ տարրն ո՛չ թէ զուլումների եւ կոտորածների էր ենթարկւում, այլ երկու պետութիւնների բարեացակամ վերաբերումի եւ հովանաւորութեան առարկան էր՝ նրանց քաղաքական եւ տնտեսական մրցակցութիւնների պատճառով:

Ազգային սահմանադրութեան եւ ազգայնական-ռոմանտիկ ուղղութեան գերիշխանութեան օրերին ծնուեց եւ կարճատեւ կեանք ունեցաւ տաճկահայ գեղարուեստական գրականութեան ամենասիրելի դէմքերից մէկը՝ «Տըրտունջ»ի անմահ հեղինակը:

II

ԴՈՒՐԵԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Պետրոս Դուրեանի պապը մի երկաթագործ էր, անունը Սարգիս: Մի օր, 1830 թուին, երբ նա աշխատում էր իր խանութում, դալիս է նրա մօտ մի յաճախորդ, որ խօսակցութեան ընթացքում միջանկեալ հարցնում է, թէ «ի՞նչպէս կը ծակեն պարզունակին (այսինքն՝ դրան փակի) ծակերը»· Սարգիսը պատասխանում է, թէ «Զմպայով»· այցելուն վրայ է բերում «վա՜յ զմպայ»· այդ օրուանից սկսում են կանչել «Զմպայ Սարգիս»: Իսկ վերջինիս որդիները եւ թոռները կոչւում են Զմպայեան:

Պետրոս Զմպայեանը, որ Սարգսի թոռն էր, Իւսկիւտարի ճեմարանի սան եղած ժամանակը, անչուշտ բարձր դասարանում, անհաճելի է գտնում իր ազգանունը եւ ցանկանում է փոխել մի ախորժելի բառով: Այդ որոնումների ընթացքում նա բաց է անում մի հին բառարան, ուր զմպայ բառին համապատասխան գտնում է դուրը եւ 1865 թուից սկսած Պետրոսը գրւում է Դուրեան ազգանունով:

Զմպայ Սարգսի մահից յետոյ Դուրեանի հայրը, դարձեալ երկաթագործ՝ Աբրահամը ամուսնանում է 1845 թուին օրիորդ Արուսեակի հետ, որ մի գրագէտ եւ համեստ աղջիկ էր: Այդ ամուսնութիւնից ծնւում է Պետրոսը, որ ունեցաւ մի քանի եղբայրներ եւ քոյրեր: Դժբախտաբար, երկաթագործի աշխատանքը շատ էր համեստ, ուստի եւ նա չքաւոր վիճակում էր ապրում իր բազմանդամ ընտանիքով: Նոյն թշուառ ընտանիքի ամենակրտսեր որդին էր Միհրանը, որ յետագայում դարձաւ Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանը՝ Պոլսի նախկին եւ Երուսաղէմի այժմեան պատրիարքը, որ հայ գրականութեան մէջ յայտնի է դարձեալ որպէս բանաստեղծ· նա ունի կրօնական-բարոյագիտական ընտիր քերթուածներ:

Պետրոս Դուրեանը յաճախ աշխատում էր անօթի, արցունքների եւ վշտերի մէջ, հողէ